ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 հուլիսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

100
(2766)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԲԱՔՈՅԱՆԸ ՀԱՅՀՈՅԵԼ Է ՔԱՂԱՔԱՑՈՒՆ, ՓՈՐՁԵԼ ՀԱՐՎԱԾԵԼ. ԱՀԱՋԱՆԳ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ վերջերս ուշագրավ միջադեպ է եղել Երեւանի Աբովյան փողոցում: ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր, Մարդու իրավունքների հանձնժողովի փոխախագահ Ռուստամ Բաքոյանը հայհոյել է քաղաքացի Սամվել Վարդանյանին եւ փորձել է հարվածել նրան: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ ամեն ինչ սկսվել է այն բանից հետո, երբ քաղաքացի Սամվել Վարդանյանը փողոցում տեսել է Ռուստամ Բաքոյանին եւ բղավել՝ դավաճան: «Ապրիլ ամսին երեկոյան է եղել միջադեպը Աբովյան փողոցում՝ բոլորիս հայտնի Շրջանայինի հատվածում: Պատգամավոր Բաքոյանն ինչ-որ մեկի հետ կանգնած զրուցում էր, ես տեսա, կանգնեցի ու նրան ասացի՝ դավաճան: Անկուսակցական եմ, որեւէ խմբակցության չեմ հարում, ուղղակի իմ գնահատականը իրենց գործունեությանը տվեցի: Բաքոյանի համար անակնկալ էր իմ ասածը, ու հետո տգեղ բառերով սկսեց հայհոյել, ինքը անընդհատ ուզում էր առաջ գալ՝ ըստ երեւույթին խփելու, քաշքշելու ինձ, սակայն իր հետի անձը կանխում էր, որ առաջ գար: Ինքը որ այդպես ագրեսիվ ուզում էր առաջ գալ դեպի ինձ, հարցրեցի՝ առաջ ես գալիս, որ թքե՞ս, ձեզ մոտ լավ է ստացվում, քանի որ Ալեն Սիմոնյանի թքելու դեպքը նոր էր եղել: Այդտեղից ավելի ագրեսիվացավ, հայհոյեց: Ինձ մոտեցան կանայք եւ խորհուրդ տվեցին, թե՝ տղա ջան, շառ է, վերջացրո՛ւ, ու միջադեպն այդպես ավարտվեց»:

Ըստ Սամվել Վարդանյանի՝ իր մոտ տարակուսանք է առաջացնում այն հանգամանքը, որ Բաքոյանը ԱԺ մարդու իրավունքներ պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ է լինելու. «Գիտեք, այս մարդը փորձում է խփել, ծեծել քաղաքացուն: Մի քիչ տարակուսանք է առաջացնում՝ ոնց է նա պաշտպանելու իմ կամ, առհասարակ, այլ քաղաքացու իրավունքները»:

Նշենք, որ Սամվել Վարդանյանը ամիսներ առաջ տեսել է նաեւ փողոցում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանին եւ նրան եւս դավաճան է ասել, ինչի արդյունքում նրան աշխատանքից հեռացրել են, ու մինչ օրս նա չի կարողանում աշխատանք գտնել: Շատերը հրաժարվում են ընդունել նրան:

ՀՀ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Ծովինար Վարդանյանը հայտարարագիր է ներկայացրել, որի համաձայն՝ նա հանդիսանում է 2010 թվականին Արաբկիր վարչական շրջանում ձեռք բերված բնակարանի միանձնյա սեփականատերը: Ըստ այդ նույն հայտարարագրի՝ նա շարժական գույք չունի: Ծովինար Վարդանյանը «Հայէկոնոմբանկ»-ից փոխառություն ունի ստացած՝ 31 մլն 560 հազար դրամի չափով: Վարկի տարեկան տոկոսադրույքը 10.5 տոկոս է: Տարվա վերջին հայտարարագրի համաձայն՝ նա իր բանկային հաշիվներին ունեցել է 288 հազար 199 դրամ, իսկ որպես կանխիկ դրամ առհասարակ գումար չի հայտարարագրել: Մեկ տարվա ընթացքում պատգամավորը 37 մլն դրամ եկամուտ է ունեցել, որից 7 մլն 896 հազար դրամը նրա պատգամավորական աշխատավարձն էր, իսկ 29 մլն 300 հազար դրամն էլ նրա վարկն է: Նրա միակ ծախսը 3 մլն դրամն է եղել, որը վարկի մարման ծախսն է եղել: Փաստորեն, նրա բոլոր ճամփորդությունները պետբյուջեի հաշվին են եղել. համեմատելի դեպքում, պատգամավորը այդ մասին չի հայտարարագրել ոչինչ:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Կառավարությունը մտադիր է հրաժարվել եկամտահարկի վերադարձի համակարգից ոչ միայն Երեւանում, այլեւ ամբողջ Հայաստանի տարածքում: Մասնավորապես, Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում Ֆինանսների նախարարությունը նոր նախագիծ է ներկայացել, եւ օրինագծով առաջարկվում է ըստ մարզերի եւ ըստ տարիների աստիճանաբար կրճատել եկամտային հարկի վերադարձի կիրառության շրջանակը: Ըստ նախագծի՝ 2027-ի հունվարի 1-ից եկամտահարկի վերադարձման համա-կարգը կիրառելի չի լինի Երեւանին հարակից Արագածոտն, Արարատ, Արմավիր եւ Կոտայք մարզերում, իսկ 2029-ի հունվարի 1-ից՝ մնացած բոլոր մարզերում: Բացառություն կլինի միայն կառավարության հաստատած ցանկում ներառված սահմանամերձ բնակավայրերում գտնվող կամ կառուցվող անշարժ գույքերի դեպքում: Հավելենք, որ «Եկամտահարկի վերադարձի մասին» օրենքը գործում է 2015-ից, 2022-ից ծրագիրը դադարեցվել է Կենտրոնում եւ Արաբկիրում, իսկ 2025-ից՝ ամբողջ Երեւանում: Այսպիսով, այս առավելությունից էլ կզրկվեն ՀՀ քաղաքացիները:

Պետական դավաճանության համար մեղադրվող եւ 26 ամիս կալանքի տակ գտնվող Գարուն Բաբայանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ահազանգեց, որ Արթիկի բանտում երկար ժամանակ է, պահանջում է արդարություն, չի հասնում: «Այդ ո՞ր շան տղեն իր մինուճար որդու հետ կգնա պաշտպանելու երկիրը ու մի հատ էլ հակառակորդին տեղակայման վայրը ցույց կտա: Եթե ես իմ երկիրը իր զնվորին, իմ թոռներին վաճառել եմ, թող տանեն, հրապարակային իմ ժողովուրդը ինձ մասնատի, գնդակահարի: Ինձ այն մարդն է մեղադրում, ով զինվորի ղադրը չգիտի: Ես պահանջում եմ արդարություն: Հիմա դատավոր են փոխել, քրեական գործը նորից վերսկսել են: Իսկ իրականում իմ դեմ գործ են հարուցել մեկ բանի համար, որ ես հաճախակի դուրս եմ եկել երկրից, տարբեր երկրներում եմ եղել, արտագնա աշխատանքի եմ գնացել, եղել եմ նաեւ Թուրքիայում: Հիմա եթե եղել եմ Թուրքիայում, այնտեղ էլ լիքը հայեր կան, ուրեմն իրենք դավաճա՞ն են: Կրկնում եմ՝ ես արդարություն եմ պահանջում, փաստեր, որոնք ինձ չեն ներկայացնում ու արդեն 26 ամիս կալանքի տակ են պահում»,- ներկայացրեց մեղադրյալը: Հիշեցնենք, որ 2021 թվականի հունիսի 7-ին ԱԱԾ-ն հայտնել էր, որ կազմակերպված խմբի կողմից պետական դավաճանության դեպք է բացահայտվել: Մասնավորապես, ըստ ԱԱԾ-ի՝ բավարար փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ «Անբասիր ծառայության համար», «Մարտական գործողություններին մասնակցելու համար» մեդալներով, կրծքանշաններով, պատվոգրերով, կառավարական պարգեւով պարգեւատրված նախկին զինվորականը իր հետ ընկերական հարաբերությունների մեջ գտնվող եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող մեկ այլ անձի հետ աշխատանք փնտրելու պատրվակով մեկնել են Թուրքիայի Հանրապետություն եւ այնտեղ հայտնվել Ադրբեջանի հատուկ ծառայությունների տեսադաշտում՝ նրանցից ընդունելով նյութական օգուտներ ստանալու դիմաց հավաքագրվելու եւ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության գործելու առաջարկը: Մեղադրյալներից մեկը Գարուն Բաբայանն է, որը Արթիկի բանտից ահազանգել է «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն՝ պահանջելով արդարություն:

ՊԱՐՔԱԲԱՆՈՒՄ

ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻ ՊԱՀԱՆՋԸ ՈՒԺԻ ՄԵՆՔ Է

Փաստաբանների բողոքի ակցիան, որը ներքին գործերի փոխնախարար Արամ Հովհաննիսյանի հրաժարականի պահանջով էր, ավարտվեց ՆԳՆ-ի դիմաց:

Արա Զոհրաբյանը ներկայացել էր բանակցության ոստիկանության պետ Արամ Հովհաննիսյանի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է հանձնաժողով ստեղծելու հարցը, որը կարձանագրի փաստաբանների խոշտանգումների դեպքերը եւ համապատասխան լուծում կտա:

Հանձնաժողովը կազմված է լինելու 3 փաստաբանից եւ 3 ոստիկանից, որոնք, ըստ Զոհրաբյանի, օպերատիվ են աշխատելու եւ ընթացք են տալու բոլոր ահազանգերին:

Ակցիայից հետո փաստաբանների խումբը շարժվեց ԲԴԽ՝ Կարեն Անդրեասյանի հրաժարականի պահանջով:

-Հանդիպեցինք ներքին գործերի նախարարի հետ, Ոստիկանության պետն ու այլ ոստիկաններ էլ էին մասնակցում: Հանդիպման ժամանակ պարոն Բաբայանը ներկայացրեց բոլոր խնդիրները: Եղավ երկուստեք քննարկում, վերլուծություն այդ խնդիրների շուրջ: Որոշվեց, որ Ներքին գործերի նախարարության հետ ստորագրվի հուշագիր, ստեղծվի հանձնախումբ՝ ոստիկաններից եւ փաստաբաններից կազմված, որը որ նմանատիպ դեպքերում օպերատիվ արձագանք կտա: Կենտրոնի բաժնում տեղի ունեցած դեպքերով ծառայողական քննությունը ընթացքի մեջ է, եւ իրենք հավաստիացրին, որ մեղավորները օբյեկտիվ պատասխանատվություն կկրեն: Այսուհետ նման դեպքեր՝ կապված փաստաբանների հետ, բացառվում է. չի լինի նման դեպք, եւ մենք ամեն ինչ կանենք, որ նման դեպքեր այլեւս չարձանագրվեն: Տարբեր հավաստիացումներ եղան: Մենք պաշտոնապես ներկայացրել ենք մեր պահանջները, այժմ խոսում ենք հետագա զարգացումների մասին:

-Իսկ հավաստագիրը տվեցի՞ք:

-Հավաստագիրը մեր գործընկերը, այո՛, ներկայացրել է Ներքին գործերի նախարարություն:

-Հրաժարականի պահանջը շարունակո՞ւմ է ուժի մեջ մնալ:

-Մենք ինչ ներկայացրել ենք, շարունակում է ուժի մեջ մնալ, բայց ասեմ, որ մենք այս հանդիպման արդյունքներից գոհ ենք, քանի որ կա հստակ հավաստիացում եւ ափսոսանք՝ նման դեպքի հետ կապված: Նրանք հավաստիացնում են, որ իրենց ի սկզբանե չեն զեկուցել դեպքի մասին, եւ սա է եղել իրենց անտարբերության պատճառը:

Զրուցեց ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆԸ

ՈՒՇԱԳՐԱՎ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ⇨ ԶԱՎԹՄԱՆ ՔԱՅԼ

Ազգային Ժողովում երեկ դադարեցվեցին Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի լիազորությունները:

Այս իրավիճակի շուրջ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ նախագահ Դանիել Իոանննիսյանի հետ: «Ես ուսումնասիրել եմ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության շրջանառած նախագիծը եւ ասեմ, որ նախագծի հիմավորման 70%-ն այն բնույթի էր, որ «կարող ենք, անում ենք»:

Եվ փաստական միակ հիմավորումը ԱԺ խորհդի նիստերին չմասնակցելն էր: Այլ հիմնավորումները, որոնք նշված են երկրորդ մասում՝ հանգամանքներ կապված ատելության խոսքի եւ այլնի հետ, որեւիցե փաստերով ամրագրված չեն: Այդ նախագիծը փաստական առումով շատ թույլ է: Այստեղ այլ հանգամանք է կարեւոր, որ այդ պաշտոնը ընդդիմությանն է քվոտայով, եւ շատ խնդրահարույց է իշխանության կողմից ընդդիմության առաջատար պաշտոնայային հանձնաժողովի նախագահի լիազորություններից զրկելը:

Այո, պաշտոնայայի գործունեությունը կարող է դուր չգալ իշխանությանը, եւ իշխանությունը պետք է դա հանդուրժի: Ես կարծում եմ՝ այս իրավիճակը իշխանության ներկայացուցիչների կողմից պետության զավթման մի փոքրիկ բաղադրիչ պարունակող քայլ է»,- ասաց Իոանննիսյանը:

ԱՆԱՐԴԱՐ Է ՀԱՄԱՐՈՒՄ

Երեկ խորհրդարանում քննարկման ու քվեարկության արդյունքում Ազգային Ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական նախագահ Թագուհի Թովմասյանի լիազորություններ դադարեցվեցին:

Իրավապաշտպան Նինա Կարապետյանցը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում այս առնչությամբ նշում է. «Ես տարակուսած եմ, որովհետեւ եթե Նաիրա Զոհրաբյանի հարցը ժամանակին չբարձացվեց հայտնի միջադեպից հետո, ես զարմանում եմ՝ ինչպես կարելի հիմա նման հարց բարձրացնել այս իրավիճակում:

Ամենակարեւոր հարցը, դու չես բարձրացնում քո թիմակիցների վարքագծի հետ կապված հարցերը՝ ԱԺ նախագահի թքելու հայտնի իրադարձություններից, վերջացրած բառացիորեն խուլիգանական եւ ԱԺ պատգամավորի ոչ վայել պահվածքների համար տարբեր իրավիճակներում: Իրավիճակներ, որտեղ իրենք իրենց դրսեւորել են՝ սեռական բնույթի հայհոյանքներ տալով, ծեծկռտուքով եւ մնացած բոլոր պատմություններով: Եվ այս դեպքում ընդդիմադիր պատգամավորի հարցը քննարկելը հանձնաժողովի նախագահի պաշտոնից զրկելու համար, մեղմ ասած, տարակուսելի է: Ես այս երեւույթը կբնորոշեմ հին ավանդույթների վերադարձ, երբ յուրայինները սրբադասված են, իսկ այլախոհների նկատմամբ կարելի է օգտագործել օրենքի ողջ խստությունը»:

ՄԱՐՈՒԹՅԱՆԸ ՆՈՐԻՑ ԱԿՏԻՎԱՆՈՒՄ Է

Երեւանի ավագանու սպասվող ընտրություններին մասնակցելու հարցով բաց է մնում նախկին քաղաքապետ Հայկ Մարությանի հարցը. վերջինս զբաղված է իր սիրած գործով՝ գումար աշխատելով: Նա ներկայացումներ է խաղում ՀՀ-ում եւ նրա սահմաններից դուրս: Տիգրան Ավինյանի ու Մանե Թանդիլյանի պարագայում պարզ է, թե ովքեր են նրանց քաղաքական հենարանները, թիմակիցները, մարդիկ, որոնք կանգնած են նրանց հետեւում, իսկ Մարությանի իրավիճակը շարունակում է անհասկանալի մնալ: Նա քաղաքապետ էր դարձել 2018թ.-ի իշխանափոխությունից հետո, երբ իշխանության վարկանիշն ամենաբարձրն էր, ու կապ չուներ, թե ով է անձը, կարեւորը՝ ում կմատնանշեր Նիկոլ Փաշինյանը: Հիմա նա ոչ միայն իշխանական թեկնածուն չէ, այլեւ չունի թիմ, ում վրա կհենվի: Մեզ փոխանցեցին, որ Հայկի թիմը հիմնականում օպերատորներ, պրոդյուսերներ, ադմիններ էին, որոնք կարողանում էին լավ տեսանյութեր նկարել, միջոցառումներ կազմակերպել, բայց շատ թույլ ու անփորձ էին համայնքային խնդիրներն ընկալելու, դրանց լուծումներ տալու հարցում: Իշխանական մեր աղբյուրները պնդում են, որ Հայկ Մարությանի համար խիստ տհաճ էր նույնիսկ առավոտյան ֆիքսված ժամին աշխատանքի հաճախելը, ժողովներ անցկացնելը, հարցերի մեջ խորանալն ու դրանց ադեկվատ լուծումներ տալը: Հիշեցնենք, որ Մարությանն ամենաշատն աշխատավայրից բացակայող քաղաքապետն էր, հաճախ է «աշխատել» հեռավար, շատ էր իր հաշվին արձակուրդ վերցրել, ու բոլորին պարզ էր, որ նա իրեն այդքան էլ հարմարավետ չի զգում պետական պաշտոնում: Սրան էլ գումարած՝ անդադար կոնֆլիկտներ էր ունենում կառավարության ու ավագանու անդամների հետ. փաստացի Մարությանի հետ արդյունավետ աշխատել չի ստացվել ո՛չ ներսում, ո՛չ դրսում: Հայկի շրջապատին մոտ կանգնած մարդկանցից մեզ փոխանցեցին, որ քիչ հավանական են համարում նրա առաջադրումը. եթե առաջադրվի ու ինչ-որ հրաշքով նորից քաղաքապետ դառնա, ապա, իր բնավորության համաձայն, արագ կհոգնի, կսկսի փնթփնթալ աշխատանքային ծանրաբեռնվածությունից: Անընդատ տարբեր լուրեր են շրջանառվում՝ Հայկ Մարությանի առաջադրման հետ կապված, քանի որ ինքն էլ չի կողմնորոշվում, թե, ի վերջո, առաջադրվի ավագանու ընտրություններին, թե ոչ:

ԻՆՉՈ՞Ւ ՉԵՆ ՆԵՐԿԱՅԱՑԵԼ

Հուլիսի 11-ին՝ Բնակչության համաշխարհային օրը, Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ջիլ բնակավայրում կազմակերպվել էր միջոցառում ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի, Հայաստանում ԵՄ պատվիրակության, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի հետ:

Նշված էր, որ այդ օրը ներկա կլինեն ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեսյանը, Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի պաշտոնակատար Նիլս Սթոքը, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Ծովինար Հարությունյանը, ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանը եւ այլք:

«Ժողովուրդ» օրաթերթի թղթակիցը եղել է Ջիլում, սակայն վերոնշյալ միջոցառմանն այդպես էլ չներկայացան ո՛չ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը, ո՛չ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեսյանը, ո՛չ Գեղարքունիքի մաչզպետ Կարեն Սարգսյանը եւ ո՛չ էլ Եմ պատվիրակության որեւէ անդամ:

Փաստացի նշված կառույցներից ներկա էր միայն Հայաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի պաշտոնակատար Նիլս Սթոքը, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ղեկավար Ծովինար Հարությունյանը, քանի որ միջոցառման նախաձեռնողը հենց Հայատանում ՄԱԿ-ի գրասենյակն էր:

«Ժողովուրդ» օրաթերթը կազմակերպիչներից հետաքրքրվեց, թե ինչու նշված մարդիկ չեն եկել միջոցառմանը, եթե նախապես նրանց անունները ներկայացված են եղել: Ի պատասխան՝ մեզ հայտնեցին, որ պաշտոնյաները վերջին պահին են հրաժարվել մասնակցել միջոցառմանը:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՄԱ՞ՅՐՆ ԷՐ ՀԱՅՀՈՅՈՒՄ

«Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Մարիա Կարապետյանը լրագրողների հետ զրույցում ո՛չ հերքեց, ո՛չ էլ հաստատեց, որ սոցիալական ցանցերում իր մայրն է սեռական բնույթի հայհոյանքներ հնչեցնում իրեն քննադատող քաղաքացիների հասցեին:

ԱՐՁԱԳԱՆՔ

«ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ»-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցությունը հայտարարություն տարածեց ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի լիազորությունների դադարեցման ապօրինի գործընթացի վերաբերյալ.

«Ս.թ. հուլիսի 11-ին ԱԺ արտահերթ նիստի օրակարգում ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի լիազորությունների դադարեցման վերաբերյալ ԱԺ մեծամասնություն կազմող, իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության կողմից ներկայացված նախագիծն իշխող քաղաքական ուժի օրինախախտ գործելաոճի հերթական օրինակներից մեկն է:

ՀՀ ԱԺ ընդդիմադիր «Պատիվ ունեմ» խմբակցությունը արձանագրում է.

ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի լիազորությունների դադարեցման վերաբերյալ ներկայացված նախագծի բոլոր հիմնավորումներն ամբողջությամբ հիմնազուրկ են եւ անօրինական: Արձանագրում ենք, որ ՀՀ «ԱԺ կանոնակարգ» օրենքով չկա որեւէ իմպերատիվ պահանջ առ այն, որ ՀՀ ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահները պետք է պարտադիր մասնակցություն ունենան ԱԺ խորհրդի նիստերին: Հետեւաբար, այն ձեւակերպումը, թե Թագուհի Թովմասյանը հետեւողականորեն չի մասնակցել ԱԺ խորհրդի նիստերին եւ այդպիսով չի կատարել հանձնաժողովի նախագահի իր պարտականություններն ու խաթարել ՄԻՊ հանձնաժողովի բնականոն գործունեությունը, պարզապես հիմնազուրկ է:

Անդրադառնալով նախագծում բերված երկրորդ հիմնավորմանը, համաձայն որի՝ հանձնաժողովի ՀՀ ՄԻՊ թեկնածուների ընտրության նիստի ընթացքում Թագուհի Թովմասյանը ՀՀ քաղաքացիների արժանապատվության վիրավորման եւ ատելության խոսքի նկատմամբ ցուցաբերել է անտարբեր վերաբերմունք ու իր անգործությամբ նպաստել դրանց կրկնությանը՝ բացարձակ զրպարտություն է: Իշխող քաղաքական ուժի կողմից բերված այն փաստարկը, թե Թագուհի Թովմասյանի կողմից տվյալ նիստի ժամանակ դրսեւորած «անգործությունը» հասանելի է հրապարակային բաց աղբյուրներում առկա տեսանյութերում, աբսուրդի ժանրից է, քանի որ այդ տեսանյութերը, ընդհակառակը, ապացույցն են այն բանի, որ Թագուհի Թովմասյանը ՀՀ ՄԻՊ թեկնածուի ընտրության հանձնաժողովի նիստը վարել է պրոֆեսիոնալ, առանց էմոցիաների, իր հնարավորության եւ լիազորությունների շրջանակներում փորձել է կառավարել բոլոր այն սադրանքներն ու խուլիգանական վարքագիծը, որոնք իրականացվել են ինչպես հանձնաժողովի անդամ հանդիսացող, այնպես էլ նիստին պարզապես ներկա գտնվող ՔՊ-ական պատգամավորների կողմից, եւ այդ մթնոլորտում նիստը հասցրել է տրամաբանական ավարտին՝ անցկացնելով համապատասխան քվեարկությունը:

Թագուհի Թովմասյանը հանձնաժողովի նախագահ ընտրվելու պահից ի վեր ամենայն պատասխանատվությամբ ու զբաղեցրած պաշտոնին համապատասխան պրոֆեսիոնալիզմով կատարել է իր վրա դրված պարտականությունները՝ իր լիազորությունների շրջանակներում լինելով ՀՀ քաղաքացիների խախտված իրավունքների պաշտպանը: Այն երեք ամիսների ընթացքում, երբ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հաստիքը թափուր էր, եւ իշխող քաղաքական ուժը չէր կարողանում նոր թեկնածու առաջադրել, Թագուհի Թովմասյանը բազմաթիվ դրվագներով ծառայել է որպես Մարդու իրավունքների պաշտպանի այլընտրանք եւ որպես խորհրդարանական օմբուդսմեն:

Լինելով պառլամենտական երկրի Մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ՝ խորհրդարանական խողովակներով միջազգային գործընկերների հետ հանդիպումներին եւ նամակագրություններում Թագուհի Թովմասյանը մշտապես անդրադարձել է Արցախի Հանրապետության, Արցախի ժողովրդի ինքնորոշման եւ ստեղծված անվտանգային խնդիրներին՝ կարեւորելով միջազգային հանրության կողմից հասցեական եւ շուտափույթ գործողությունների իրականացումը:

Ելնելով վերոշարադրվածից՝ ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցությունը հայտարարում է.

Թագուհի Թովմասյանի լիազորությունների դադարեցման այս գործընթացն ամբողջապես քաղաքական է եւ միտված է ճնշումներ գործադրել ընդդիմության վրա:

ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցությունը բոյկոտելու է ս.թ. հուլիսի 11-ին գումարված ՀՀ ԱԺ արտահերթ նիստը՝ հաշվի առնելով նաեւ այն փաստը, որ այս ապօրինի գործընթացի ընթացքում Թագուհի Թովմասյանը զրկված է լսված լինելու իր իրավունքի իրացման հնարավորությունից:

Այս ապօրինի որոշման ընդունման դեպքում ՀՀ ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցությունը, ըստ Դոնթի բանաձեւի՝ ընդդիմությանը բաժին հասած քվոտայով, չի առաջադրելու ՀՀ ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի նոր թեկնածու»:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՅՑԵԼԵԼ Է ՋՈՐԱՄԱՍ

Հուլիսի 11-ին պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանն այցելել է ՊՆ N զորամաս եւ հետեւել զինծառայողների ատեստավորման քննություններին:

Նախարարի այցի ընթացքում զինծառայողները քննություններ էին հանձնում ֆիզիկական պատրաստություն առարկայից:

Զրուցելով քննական հանձնաժողովի անդամների հետ՝ նախարար Պապիկյանը հետաքրքրվել է քննությունների ընթացքով եւ հանձնարարականներ տվել ատեստավորման գործընթացը պատշաճ եւ անաչառ անցկացնելու համար:

Նշենք, որ հուլիսի 10-ից ՋՈՒ մի շարք զորամասերի զինծառայողների համար մեկնարկել են ատեստավորման քննությունները:

ՆՈՐ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ՝ ԱԺ–ՈՒՄ

Կյանքից հեռացած ՔՊ-ական պատգամավոր Վիգեն Խաչատրյանի փոխարեն՝ ԱԺ հուլիսի 11-ի արտահերթ նիստում մանդատ ստացավ Անուշ Քլոյանը:

Վերջինս, «ԱԺ կակոնակարգի» համաձայն, ԱԺ ամբիոնի մոտից երդվեց:

Անուշ Քլոյանը Մարտի 1-ին անկարգությունների ժամանակ զոհված Գոռ Քլոյանի քույրն է, «Մարտի 1»-ի գործով տուժած ճանաչված, ՔՊ-ական դարձած Սարգիս Քլոյանի դուստրն է: Երեւանի ավագանու 2018թ.-ի ընտրությունների՝ «Իմ քայլը» դաշինքի ցուցակով ընտրվել էր ավագանու անդամ:

Անուշ Քլոյանը ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Վիգեն Խաչատրյանի մահվանից հետո պատգամավորի մանդատ էր ստացել, քանի որ ՔՊ-ի ընտրական ցուցակում նա հերթական համարն էր: ԿԸՀ-ն Քլոյանի վերաբերյալ որոշում էր կայացրել հունիսի 27-ին:

26 ԱՄԻՍ՝ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ

«ԵԹԵ ՄԵՂԱՎՈՐ ԵՄ, ԹՈՂ ԳՆԴԱԿԱՀԱՐԵՆ»

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Արթիկի բանտում պետական դավաճանության համար մեղադրվող եւ 26 ամիս կալանքի տակ գտնվող Գարուն Բաբայանը ահազանգում է՝ պահանջելով արդարություն. «Այդ ո՞ր շան տղեն իր միանձար որդու հետ կգնա պաշտպանելու երկիրը ու մի հատ էլ հակառակորդին տեղակայման վայրը ցույց կտա: Եթե ես իմ երկիրը իր զինվորին, իմ թոռներին վաճառել եմ, թող տանեն հրապարակային իմ ժողովուրդը ինձ մասնատի, գնդակահարի: Ինձ այն մարդն է մեղադրում, ով զինվորի դադրը չգիտի: Ես պահանջում եմ արդարություն, հիմա դատավոր են փոխել, քրեական գործը նորից վերսկսել են: Իմ դեմ գործ են հարուցել մեկ բանի համար՝ ես հաճախակի դուրս եմ եկել երկրից, տարբեր երկրներում եմ եղել, արտագնա աշխատանքի են գնացել, եղել եմ նաեւ Թուրքիայում: Հիմա եթե եղել եմ Թուրքիայում, այնտեղ էլ լիքը հայեր կան, ուրեմն իրենք դավաճա՞ն են: Կրկնում եմ՝ ես արդարություն եմ պահանջում, փաստեր, որոնք ինձ չեն ներկայացնում ու արդեն 26 ամիս կալանքի տակ են պահում»:

Հիշեցնենք, որ 2021 թվականի հունիսի 7-ին ԱԱԾ-ն հայտնել էր, որ կազմակերպված խմբի կողմից պետական դավաճանության դեպք է բացահայտվել: Մասնավորապես, ըստ ԱԱԾ-ի՝ բավարար փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ «Անբասիր ծառայության համար», «Մարտական գործողություններին մասնակցելու համար» մեդալներով, կրծքանշաններով, պատվոգրերով, կառավարական պարգեւով պարգեւատրված նախկին զինվորականը իր հետ ընկերական հարաբերությունների մեջ գտնվող եւ Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող մեկ այլ անձի հետ աշխատանք փնտրելու պատրվակով մեկնել են Թուրքիայի Հանրապետություն եւ այնտեղ հայտնվել Ադրբեջանի հատուկ ծառայությունների տեսադաշտում՝ նրանցից ընդունելով նյութական օգուտներ ստանալու դիմաց հավաքագրվելու եւ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության գործելու առաջարկը:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի է դարձել քրեական գործով երկու մեղադրյալների ով լինելը, եւ նրանց մասով ԱԱԾ-Ն որոշում է կայացրել, քրեական գործով նախաքննության ավարտ է հայտարարվել, ու գործն ուղարկվել է դատարան: Մասնավորապես, մեղադրյալներից մեկը Գարուն Բաբայանն է, որին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ քաղաքացի, Գագիկ Հովհաննիսյանի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում թշնամու կողմն անցնելու, լրտեսության, օտարերկրյա պետության ներկայացուցիչներին պետական գաղտնիք հանձնելու կամ թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ օգնություն ցույց տալու եղանակներով 2018թ. ընթացքում կատարել է պետական դավաճանություն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության: Բացի այդ, ՀՀ քաղաքացի Գարուն Բաբայանը թշնամու կողմն անցնելու, լրտեսության, օտարերկրյա պետության ներկայացուցիչներին պետական գաղտնիք հանձնելու կամ թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ օգնություն ցույց տալու եղանակներով 2020թ. ընթացքում կատարել է պետական դավաճանություն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության:

Այսինքն՝ Գարուն Վահակի Բաբայանը կատարել է հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քր. օրի 299 հոդվածի 1-ին մասով:

Մյուս անձը Գագիկ Հովհաննիսյանն է, որին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ քաղաքացի, Գարուն Բաբայանի հետ նախնական համաձայնությամբ, խմբի կազմում թշնամու կողմն անցնելու, լրտեսության, օտարերկրյա պետության ներկայացուցիչներին պետական գաղտնիք հանձնելու կամ թշնամական գործունեություն իրականացնելու համար այլ օգնություն ցույց տալու եղանակներով կատարել է պետական դավաճանություն՝ ի վնաս Հայաստանի Հանրապետության տարածքային անձեռնմխելիության եւ արտաքին անվտանգության: Այսինքն՝ Գագիկ Ժորայի Հովհաննիսյանը կատարել է հանցավոր արարք, որը նախատեսված է ՀՀ քր.օրի 299 հոդվածի 1-ին մասով: Վերոնշյալ անձինք կալանավորված են:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՆԳ ՆԱԽԱՐԱՐՆ ՈՒ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ

Հուլիսի 11-ին ՀՀ ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանն ընդունել է ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Սիմոն Բաբայանին, Հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավար Գեւորգ Մկրտչյանին եւ ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Արա Ջոհրաբյանին:

Հանդիպմանը ներկա են եղել ոստիկանության պետ-ՆԳ նախարարի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր Արամ Հովհաննիսյանը, ՆԳՆ ոստիկանության ներքին անվտանգության վարչության պետ, ոստիկանության գնդապետ Վաղինակ Մարտիրոսյանը:

Հանդիպման ավարտին ընդունվել է համատեղ հայտարարություն, որը ներկայացվում է ստորեւ՝

«Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը եւ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը, քննարկելով Ոստիկանության Երեւան քաղաքի Էրեբունու եւ Կենտրոնական բաժիններում 2023 թ. փետրվարին եւ հունիսին արձանագրված ոստիկանների եւ փաստաբանների հետ կապված միջադեպերը, հայտարարում են՝

1. կողմերը կարեւորում են փաստաբանության եւ ոստիկանության ինստիտուտների դերակատարումը Հայաստանի իրավական համակարգում,

2. կողմերը անընդունելի են համարում բռնությունների ցանկացած դրսեւորում,

3. Ներքին գործերի նախարարությունը ծառայողական քննությունների արդյունքներով իր գնահատականը տվել է Էրեբունու բաժնում տեղի ունեցած միջադեպին, իսկ Կենտրոնական բաժնում տեղի ունեցած միջադեպը գտնվում է ծառայողական քննության ընթացքում,

4. Ներքին գործերի նախարարությունը հավաստիացնում է, որ միջադեպերին ներգրավված ոստիկանության ծառայողների արարքներին կտրվի պատշաճ իրավական գնահատական՝ ապահովելով բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ ուսումնասիրություն,

5. Ներքին գործերի նախարարությունը եւ Փաստաբանների պալատը կստեղծեն ոստիկանության ծառայողներից եւ փաստաբաններից կազմված հանձնախումբ՝նման իրավիճակներում օպերատիվ արձագանքելու, փոխադարձ քննարկումներ, վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու, ինչպես նաեւ ոստիկանության ծառայողների եւ փաստաբանների վարքագծի հետ կապված հարցերը քննարկելու նպատակով,

6. Ներքին գործերի նախարարությունը եւ Փաստաբանների պալատը մոտ օրերս կստորագրեն համագործակցության հուշագիր»:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՍՊԱՌՆԱՑԵԼ ԵՆ, ՀԱՓՇՏԱԿԵԼ

2023 թվականի հուլիսի 11-ին՝ ժամը 01:45-ին, Ոստիկանության Մալաթիայի բաժին ահազանգ, ապա նաեւ հաղորդում է ստացվել՝ անհայտ անձանց կողմից բնակելի տուն ներխուժելու, բնակիչներին կապկպելու, գումար եւ թանկարժեք իրեր գողանալու վերաբերյալ:

ՔԿ-ից հայտնում են, որ, նախնական տվյալներով, 2023 թվականի հուլիսի 10-ին՝ ժամը 23:00-ի սահմաններում, երկու անհայտ անձ՝դիմակավորված, ապօրինի կերպով մուտք են գործել Երեւան քաղաքի Տիտովի փողոցի տներից մեկը, կապել բնակիչ ամուսինների ձեռքերը, զենքի ցուցադրմամբ եւ սպառնալիքներ հնչեցնելով հափշտակել են տարբեր արտարժույթներով առանձնապես խոշոր չափերով գումարներ, ոսկյա զարդեր: Ապա տանտիրոջը պատկանող «Տոյոտա» մակնիշի ավտոմեքենայով նշված անձինք դիմել են փախուստի:

Դեպքի առթիվ 2023թ. հուլիսի 11-ին ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում, ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով, ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 2-րդ մասով, նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության ընթացքում կատարվել են անհետաձգելի քննչական գործողություններ: Մասնավորապես, զննվել է դեպքի վայրը, վերցվել են ձեռքի եւ կենսաբանական ծագում ունեցող հետքեր, ինչպես նաեւ առանձնատանը հայտնաբերված կպչուն ժապավեններ: Ամուսինները ճանաչվել են տուժող եւ հարցաքննվել: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում տուժողին պատկանող «Toyota Land Cruiser» մակնիշի ավտոմեքենան անվնաս վիճակում հայտնաբերվել է Երեւան քաղաքի Բագրատունյաց փողոցի 16/2 հասցեի դիմաց գտնվող կանգառում: Հետագա քննչական եւ վարութային գործողություններ կատարելու նպատակով ավտոմեքենան տեղափոխվել է ՀՀ ոստիկանության հատուկ պահպանվող տարածք: Նշանակվել են դատաբժշկական, դատամատնադրոշմային, դատագենետիկական փորձաքննություններ:

Ձեռնարկվում են անհրաժեշտ քննչական, վարութային գործողություններ, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ՝ հանցանք կատարած անձանց, ինչպես նաեւ հափշտակված նյութական միջոցները հայտնաբերելու ուղղությամբ: Այդ նպատակով հետաքննության մարմնին տրվել է հանձնարարություն:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝հուլիսի 10-ից 11-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 53 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ԴԵՆԴՈՊԱՐԿՆ ԵՆ ԼՈՒԾԱՐՈՒՄ

Իջեւանի գինու, կոնյակի գործարանի կողմից Աղստեւ գետի հունում կատարված ապօրինի մեծածավալ շինարարության հետեւանքով դենդրոպարկի ջրառը 2 տարի 7 յոթ ամիս զրկվել է Աղստեւի ինքնահոս ջրից, ինչի հետեւանքով դենդրոպարկում չորացել է հազվագյուտ եւ արժեքավոր 1500 ծառ ու թուփ եւ 24 000 տնկի: 2021թ. հոկտեմբերի 15-ին ՀՀ քրեական օրենսգրքի 308 հոդվածի 1-ին մասով եւ 290 հոդվածի 1-ին մասով քրեական վարույթ է նախաձեռնվել, սակայն նախաքննությամբ մինչ այժմ որեւէ մեկի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված չէ: Իջեւանի դենդրոպարկը 1989 թվականից տնօրինող Մեխակ Սայադյանը հայտնեց, որ Տավուշի մարզային քննչական վարչությունում քննվող թիվ 38164721 քրեական գործով նշանակվել են փորձաքննություններ, որոնց ընթացքում արգելվում են իրականացնել դենդրոպարկի չորացած ծառերի եւ թփերի հատումը, հանումը եւ հեռացումը: Նրա խոսքերով՝ անտեսելով ՀՀ քննչական կոմիտեի Տավուշի մարզային քննչական վարչության 2023 թվականի հունվարի 23-ի գրությունը եւ արհամարհելով իր զգուշացումները եւ պահանջները՝ Շրջակա միջավայրի նախարարության եւ դրա ենթակայությամբ գործող «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի ղեկավարները, այդ թվում՝ այդ ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Լեւոն Տեր Սիմոնյանը, ձեռնամուխ են եղել ոչ թե դենդրոպարկի հասցված վնասները գնահատող հանձնաժողով կազմելուն, այլ Իջեւանի դենդրոպարկ պետական հիմնարկի լուծարմանը՝ մտածելով, որ դրանով կլուծեն դեդրոպարկի հիմնահարցը: Մեխակ Սայադյանը եւ Իջեւանի դենդրոպարկի 3 այլ աշխատակիցները Լեւոն Տեր-Սիմոնյանից ծանուցումներ են ստացել, որ օգոստոսի 20-ից, հաստիքների կրճատման հիմքով, Իջեւանի դենդրոպարկը լուծարվելու է: Մ. Սայադյանը հայտնեց, որ ինքը գրություն է ուղարկել ՇՄ նախարար Հ. Սիմիդյանին՝ ցանկություն հայտնելով մասնակցելու «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնի համար մրցույթին: Նշեմ, որ Իջեւանի գինու, կոնյակի գործարանն առանց շինթույլտվության Աղստեւ գետի հունում պատ կառուցելու համար 2021թ. մարտի 29-ին տուգանվել է 200 հազար դրամի չափով: Գործարանը շարունակել է կառուցապատումը եւ 2021թ. հուլիսի 14-ին երկրորդ անգամ է ենթարկվել վարչական պատասխանատվության՝ 2 միլիոն 500 հազար դրամի չափով: 2023թ. հունվարի 16-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի գրասենյակում կայացել է Իջեւանի դոնդրոպարկի տարածքի երկրորդ մասի՝ 5,7 հեկտարի վարձակալության տրամադրելու մրցույթ, որում հաղթել է Իջեւանի գինու, կոնյակի գործարանը: 2023թ. փետրվարի 2-ին «Արգելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ի տնօրեն (այժմ նախկին) Լեւոն Գաբրիելյանի եւ Իջեւանի գինու, կոնյակի գործարանի միջեւ կնքվել է վարձակալության պայմանագիր, 5,7 հա տարածքը, որը դենդրոպարկի մաս է, հատկացվել է գինու, կոնյակի գործարանին հանգստի գոտի ստեղծելու նպատակով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆՈՐՈՒԹՅՈՒՆ

«ՄԵՐԳԵԼՅԱՆԻ» ՊՈՒՐԱԿԸ ԿՎԵՐԱԿԱՌՈՒՑՎԻ

Երեւանի քաղաքապետարանն «Ակտիվ քաղաքացի» հարթակում առաջարկել էր տարածքի բարեկարգման երկու նախագիծ: 15 օր քաղաքացիները կարող էին գրանցվել հարթակում, քվեարկել եւ մեկնաբանել: Թե որ նախագիծը կընտրվի, կորոշվի՝ հաշվի առնելով բնակիչների կարծիքներն ու մեկնաբանությունները:

«Հարթակի նպատակը քաղաքային նշանակալի նախագծերի վերաբերյալ երեւանցիների կարծիքները հավաքելն ու որոշումներ կայացնելու ընթացքում դրանք հաշվի առնելն է»,- նշել է Երեւանի քաղաքապետի տեղակալ Սուրեն Գրիգորյանը:

Շուրջ 8000 քաղաքացի է ծանոթացել նախագծերին, 964-ը քվերակել ու մեկնաբանություն է թողել: «Ակտիվ քաղաքացի» հարթակին միանալու համար պետք է գրանցվել՝ անցնելով նույնականացում: Մի քանի քայլ, եւ Դուք ակտիվ քաղաքացի եք: Առայժմ քվերակությանը կարող են մասնակցել Երեւանի գրանցում ունեցող բնակիչները:

«Կայքում գործում է բլոկչեյն համակարգ, ինչն առավելագույնս թափանցիկ է դարձնում գործընթացը»,-շեշտում է Գրիգորյանը: Քաղաքացիների հետ կապն աշխուժացնելու համար, առաջարկների ընդունումից ու նախագծերը ներկայացնելուց բացի, «Ակտիվ քաղաքացին» առաջիկայում նոր հնարավորություններ կընձեռի: «Հարթակն արդեն գործում է: Առաջին նախագծի քվեարկությունն արդեն իսկ ավարտվել է եւ այս պահին քվեարկության եւ մեկնաբանությունների ուսումնասիրման եւ քննարկման փուլում է: Հարթակի նպատակն է որոշակի նշանակալի նախագծերի վերաբերյալ հավաքել երեւանցիների կարծիքները եւ դրանք հաշվի առնել կայացվող որոշումների շրջանակներում»,- նշեց քաղաքապետի տեղակալը:

Սուրեն Գրիգորյանի խոսքով՝ քվեարկությունը նման ձեւաչափով իրականացնելու նպատակներից մեկն այն էր, որ այս պարագայում բացառվում է որեւիցե կողմնակի ազդեցություն քվեարկության արդյունքների վրա:

«Այս պարագայում քվեարկության արդյունքների վրա կողմնակի ազդեցությունը բացառվում է, քանի որ հարթակում քվեարկելու համար պետք է անցնել բավականին խիստ նույնականացում՝ անձը հաստատող փաստաթղթով, եւ անպայման պետք է գրանցված լինել Երեւան համայնքի ռեգիստրում: Այլ համայնքների ռեգիստրներում գրանցված անձինք կարող են գրանցվել հարթակում, բայց չեն կարող քվեարկել: Քաղաքապետի տեղակալն ընդգծեց՝ հարթակում գործում է կարծիքներ հայտնելու երկու տարբերակ՝ քվեարկություն նախագծի վերաբերյալ առաջարկվող տարբերակներից մեկի օգտին եւ երկրորդը՝ մեկնաբանություններ թողնելը:

«Մերգելյանի» պուրակի նախագիծն առաջինն էր իր ձեւաչափով, որ «Ակտիվ քաղաքացի»-ում ներկայացվեց բնակիչներին: Արդեն 10038 քաղաքացի է գրանցված հարթակում, միայն 1000-ը՝ վերջին երկու շաբաթում: Առաջիկայում նոր նախագծեր կդրվեն հանրային քննարկման: Բջջային հավելվածով նաեւ հնարավոր կլինի խնդիրներն արագորեն վեր հանել եւ հանրայնացնել:

Երեւանի զարգացմանը մասնակցելու եւ երազանքի քաղաքը ստեղծելու համար քաղաքապետարանը հորդորում է միանալ հարթակին եւ դառնալ ակտիվ քաղաքացի:

ԿԱՐԵՎՈՐ

ԱՋԱՓՆՅԱԿԸ՝ ԱՂԲԻ ՄԵՋ ⇨

Աջափնյակ վարչական շրջանն աղբի մեջ կորած է: Խայտառակ անմխիթար վիճակում են գտնվում փողոցի մայթերը, գրեթե բոլոր մայթեզրերը կոտրված եւ պատված են չորացած ծառակոճղերով, խոտերով եւ աղբով, նույն իրավիճակն է նաեւ շենքերի բակերում եւ զբոսայգիներում: Ավելին՝ տեղի բնակիչները մեզ հետ զրույցում ոչ միայն դժգոհեցին աղբի կուտակումներից, այլ նաեւ նշեցին, որ 15 օր է՝ քանդել են գլխավոր ճանապարհը վերանորոգման նպատակով, սակայն տպավորություն է, որ ոչ մի աշխատանք էլ չի կատարվում, եւ անգամ պահպանված չեն շինարարական հրապարակ ստեղծելու տարրական նորմերը, որպեսզի չվտանգեն քաղաքացիների կյանքը:

«Ժողովուրդ» օրաթերթը ստեղծված իրավիճակի մասին փորձեց մեկնաբանություն ստանալ Ափաջնյակ վարչական շրջանի ղեկավար Կամսար Բաբինյանից, սակայն մեր զանգերն այդպես էլ մնացին անպատասխան:

Հուսով ենք, որ մեր ահազանգից հետո Ափաջնյակ վարչական շրջանի ղեկավարությունը կվերանայի իր գործելաոճը եւ հատուկ ուշադրություն կդարձնի փողոցների բարեկարգմանն ու մաքրությանը:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԵՐԹԱԳՐՈՒՄ՝ ԱՆՁՆԱԳՐԱՅԻՆՆԵՐՈՒՄ

ՀՀ ՆԳՆ միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունից «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացնում են, որ հուլիսի 17-ից Երեւանի բոլոր անձնագրային ծառայություններն անցում կկատարեն էլեկտրոնային հերթագրման համակարգով սպասարկելուն:

Արդեն իսկ էլեկտրոնային հերթագրման կարգ գործում է Քանաքեռ-Զեյթունի, Արաբկիրի եւ Մաշտոցի անձնագրային բաժանմունքներում, իսկ հուլիսի 10-ից էլեկտրոնային հերթագրում կիրականացվեն նաեւ Կենտրոնականի, Նոր Նորքի, Մալաթիա-Սեբաստիայի եւ Շենգավիթի անձնագրային ծառայություններում:

Հուլիսի 17-ից արդեն Երեւանի բոլոր ծառայություններն անցում կկատարեն էլեկտրոնային տարբերակով սպասարկելուն:

Երեւան քաղաքում էլեկտրոնային հերթագրման համակարգն ամբողջությամբ ներդնելուց հետո Միգրացիայի եւ քաղաքացիության ծառայությունն անցում է կատարելու երեւանամերձ հատվածներին, խոշոր քաղաքներին:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 14 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՆԱԽԱԳԻԾ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ՝ ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՀԱՇՎԻՆ

ԿԳՄՍ նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել «Նախադպրոցական ուսումնական հաստատությունների՝ մեկ սանի հաշվարկով ՀՀ պետական բյուջեի միջոցներից ֆինանսավորման հետ կապված հարաբերությունները, այդ թվում՝ կրթության եւ զարգացման առանձնահատուկ պայմանների ապահովման համար անհրաժեշտ ֆինանսավորման բարձրացված չափաքանակը սահմանելու մասին» կարգում փոփոխություն կատարելու վերաբերյալ որոշման նախագիծը:

Մեր տեղեկություններով՝ առաջարկվող փոփոխությամբ նախատեսվում է, որ զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի (ծնողների) երեխաների, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետության տարածքում ադրբեջանական ագրեսիայի արդյունքում զոհված զինծառայողների ընտանիքների երեխաների նախադպրոցական կրթությունը պետական բյուջեի հաշվին կիրականացվի 2023 թվականի սեպտեմբերի 1-ից՝ 2024 թվականի սեպտեմբերի 1-ի փոխարեն:

Փոփոխությունը պայմանավորված է 2020 թվականի 44-օրյա պատերազմի ընթացքում եւ դրանից հետո տեղի ունեցած ընդհարումների, միջադեպերի, ինչպես նաեւ 2022թ. սեպտեմբերի 13-ին Հայաստանի Հանրապետության տարածքում ադրբեջանական ագրեսիայի արդյունքում զոհված զինծառայողների ընտանիքների երեխաների հանդեպ պետական հոգածության, նրանց զարգացման հնարավորությունների ընդլայնման համար պայմանների ստեղծման անհրաժեշտությունից:

Առաջարկվում է ընտանեկան նպաստ ստացող համակարգում հաշվառված ընտանիքների երեխաների համար պետական բյուջեից մեկ սանի հաշվարկով ֆինանսավորումն իրականացնել 2024 թվականի սեպտեմբերի 1-ից՝ 2023 թվականի սեպտեմբերի 1-ի փոխարեն:

Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ հուլիսի 23-ը կարող են նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում: Առաջարկությունների եւ դիտողությունների արդյունքում նախագիծը կլրամշակվի եւ սահմանված կարգով կներկայացվի հաստատման:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

ԴԵՂԵՐԻ ՇՈՒԿԱՆ ԿԲԱՐԵԼԱՎՎԻ

Հուլիսի 11-ին գումարված ԱԺ արտահերթ նստաշրջանում առաջին ընթերցմամբ քննարկվել է դատգամավորներ Նարեկ Ջեյնալյանի եւ Արփինե Դավոյանի հեղինակած «ՀՀ հարկային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը:

Առաջարկվող նախագծով Հայաստանում որոշակիորեն կբարելավվի դեղերի շուկայի գործունեությունը, ինչը դեղերի որակի բարձրացմանն ուղղված քայլ է. այս մասին ասել է Առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Նարեկ Ջեյնալյանը: Փոփոխության անհրաժեշտությունը ծագել է այն հանգամանքից հետո, երբ տեսչական մարմինը դեղատներում հայտնաբերել է դրոշմապիտակավորված, սակայն ՀՀ-ում չգրանցված, անօրինական ներկրված դեղորայք:

Առաջարկվող կարգավորումներով ներմուծվող դեղամիջոցը կօտարվի ներմուծման հավաստագրի (համապատասխանության) նմուշառման եւ փորձագիտական դրական եզրակացություն ստանալուց հետո՝ նպաստելով ՀՀ-ում շրջանառվող դեղերի անվտանգության բարձրացմանը:

Հանձնաժողովի նախագահի խոսքով՝ ՊԵԿ-ը հնարավորություն չունի ստուգելու ներկրման հավաստագրի փաստը, առկայությունն ու իսկությունը:

«Նախատեսվում է ինտեգրել Առողջապահության նախարարության եւ ՊԵԿ-ի համապատասխան համակարգերը, որպեսզի ՊԵԿ-ը կարողանա ստուգել ներկրման հավաստագրի առկայությունը եւ հավաստիանալ, որ նախարարությունն իսկապես թույլատրել է ապրանքատեսակի ներկրումը Հայաստան, որից հետո կտրամադրվեն համապատասխան դրոշմապիտակներ:

Դրոշմապիտակի մերժման հիմքերում ավելացվել է այդ հավաստագրի բացակայությունը: Դրոշմապիտակավորման ենթակա ապրանքների ցանկում ավելացվել է երկու ծածկագրով դեղորայք եւ դեղանյութ, որոնք բացակայում էին ցանկից»,- մանրամասնել է Նարեկ Ջեյնալյանը: Խաչատուր Սուքիասյանը հետաքրքրվել է՝ արդյոք ժամկետ ֆիքսված է նմուշառության ԱՆ պատասխանի եւ ՊԵԿ-ի՝ դրոշմապիտակ տրամադրելու համար: Նարեկ Ջեյնալյանը նշել է, որ դրոշմապիտակ տրամադրելու համար սահմանվել է եռօրյա ժամկետ՝ շեշտելով, որ սահմանվել են ողջամիտ ժամկետներ: Հանձնաժողովի նախագահը հավելել է, որ ներկրման հավաստագիր ստանալու համար ԱՆ դիմելու եւ ՊԵԿ-ից դրոշմապիտակ ստանալու հայտը լրացնելիս պարտադիր նշվելու է դեղի պիտանելիության ժամկետը:

Հարակից զեկուցող, ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը տեղեկացրել է, որ նախագիծը քննարկվել է Կառավարության, ՀՀ առողջապահական եւ աշխատանքի տեսչության համապատասխան մասնագետների, դեղերի մանրածախ եւ մեծածախ գործունեությամբ զբաղվող կազմակերպությունների, ինչպես նաեւ դեղագործական ասոցիացիայի ներկայացուցիչների հետ: Նրա խոսքով՝ Առողջապահության նախարարությունը 7-օրյա ժամկետում պետք է տրամադրի ներմուծման հավաստագիր:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՃՈՒՐԴԻ ՄԱՍԻՆ

Սնանկության դատարանը թիվ ՍԴ/0566/04/22 սնանկության գործով 03.07.2023թ.-ին կայացրել է որոշում՝ դատարանի եւ երրորդ անձի գույքի վաճառքը թույլատրելու մասին:

Համաձայն վերոնշյալ որոշման՝ պարտապան ԱՁ Վերգինե Հակոբյանի սնանկության գործով կառավարիչ Ա. Փարսադանյանի կողմից կազմակերպվող՝ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում գրավադրված ք. Երեւան, Դավթաշեն 4 թաղ., 44 շենք, բն. 8 հասցեի անշարժ գույքի հրապարակային սակարկությունների միջոցով աճուրդ-վաճառքը տեղի է ունենալու 27.07.2023թ.-ին՝ ժամը 12:30-ին, ք. Երեւան, Արշակունյաց պողոտա, 5 շենք, թիվ 311 սենյակ հասցեում, թվով մեկ լոտով, այն է՝

Լոտ 1. ՀՀ, ք. Երեւան, Դավթաշեն 4 թաղ., 44 շենք, բն. 8 հասցեի անշարժ գույք, /թիվ 19112015-01-0117 վկայական/, որը համատեղ սեփականության իրավունքով պատկանում է պարտապան Վերգինե Հակոբյանին, գրավադրված է «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ում, ընդհանուր մակերեսը՝ 112,8 քմ, 9 հարկանի պանելային շենքի 3-րդ հարկում է:

Լոտի մեկնարկային գինը՝ 54 260 000 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար ցանկացողները պետք է ներկայացնեն աճուրդի մասնակցության հայտ: Մասնակցության վճարը եւ նախավճարը կազմում են լոտի մեկնարկային գնի համապատասխանաբար 1 եւ 5 տոկոսները:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը, աճուրդի մասնակից չհամարվող անձանց մուտքի վճարը /5.000 ՀՀ դրամ/ վճարվում են կանխիկ կամ փոխանցումով «Արդշինբանկ» ՓԲԸ-ում պարտապան ԱՁ Վերգինե Հակոբյանի սնանկության գործով բացված թիվ 2474503156400000 հատուկ հաշվին մինչեւ աճուրդին նախորդող օրը ներառյալ:

Աճուրդին մասնակցել ցանկացողները, ինչպես նաեւ աճուրդի մասնակից չհամարվող անձինք սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն, կարող են հայտ ներկայացնել, իսկ աճուրդի մասնակից չհամարվող անձինք՝ ծանուցում ներկայացնել ՀՀ սնանկության դատարան /հասցե՝ ք. Երեւան, Օտյան 53/2/: Աճուրդն անցկացվում է բաց դասական եղանակով. հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը:

Աճուրդային գործընթացին /այդ թվում՝ կազմակերպման կարգը, լոտերի քանակը, գինը, նկարագրությունը, աճուրդի օրը, ժամը, անցկացման վայրը, հայտերի ներկայացման կարգը եւ անհրաժեշտ այլ տեղեկություններ/ կարող եք հետեւել ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային՝ www.azdarar.am կայքի միջոցով կամ զանգահարել սնանկության գործով կառավարիչ Ա. Փարսադանյանին: Հեռ.՝ (091) 494059:

Աճուրդը կազմակերպվում եւ անցկացվում է ՀՀ արդարադատության նախարարի՝ 16.03.2020թ.-ի թիվ 116-Ն հրամանով սահմանված կարգին համապատասխան:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՊԵՂՈՒՄՆԵՐԸ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ

ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը սկսել է պեղումները ՀՀ Կոտայքի մարզի Հատիս լեռան վրա նոր հայտնաբերված ամրոցի տարածքում:

ԿԳՄՍ նախարարության տարածած հաղորդագրությունից տեղեկանում ենք, որ պեղումներն իրականացվում են՝2023թ. մարտ ամսին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության ու «Գագիկ Ծառուկյան» բարեգործական հիմնադրամի միջեւ կնքված հուշագրի հիման վրա:

Ամրոցը (Ծամիրամի բերդ, Հատիսի ամրոց) գտնվում է Հատիսի կոնաձեւ գագաթին: Պատերի լայնությունը տատանվում է 2-4,5մ, բարձրությունը՝ 1-3մ միջեւ: Կառուցված է բազալտի խոշոր եւ միջին չափերի անմշակ քարերով: Արեւելյան պարսպապատի մեջ պահպանվել է 3 մ լայնությամբ մուտքը, որի երկու կողմերում երկու որմնահեծեր կան: Արեւմտյան պարսպաշարի երկարությամբ ձգվում են հնավայրի հիմնական կառույցները: Պարսպաշարի առավել պահպանված հատվածը՝ մոտ 3մ, ունի ավելի քան 10 շարք բարձրություն:

Հաշվի առնելով պեղման ենթակա տարածքի խիստ ընդարձակ մակերեսը՝ «Հատիսի ամրոցի» հետազոտվող տարածքը բաժանվել է 10x10 մ չափերով քառակուսիների: Արշավախմբի կազմում ընդգրկված են հայ եւ իտալացի 6 հնագետներ ամրոցի տարածքի պեղումներն իրականացնելու համար (ղեկավարներ՝ Արթուր Պետրոսյան եւ Ռոբերտո Դան):

Այս պահին ձեռք բերված տվյալները թույլ են տալիս հնավայրը թվագրել բրոնզ երկաթեդարյան, անտիկ եւ միջնադարյան ժամանակաշրջաններով: Հայտնաբերված հնագիտական գտածոների մեջ կարելի է առանձնացնել տարբեր ժամանակաշրջանների խեցանոթների օրինակներ, բրոնզեդարյան նետասլաքների օրինակներ օբսիդիանից, երկաթից նիզակի ծայր, տարբեր քարերից, երկաթից եւ բրոնզից պերճանքի առարկաներ, գլանաձեւ կնիք (հավանաբար մ.թ.ա. 5-րդ դար) եւ Ալեքսանդր Մեծի պատկերով արծաթյա դրամը:

Պեղումները շարունակվում են. ավարտը նախատեսվում է օգոստոսի վերջին:

ՀՐԱՉԳՈՒԹՅՈՒՆ

ՄՐՑԱՇԱՐԻ ԱՌԱՔԱՏԱՐԸ ⇨

Հայաստանը ներկայացնող շախմատիստները հաջող են մասնակցում «Benasque Open 2023» շախմատի միջազգային մրցաշարին:

Իսպանիայի Բենասկե քաղաքում ընթացող համանուն մրցաշարին Հայաստանը ներկայացնում են Ռոբերտ Հովհաննիսյանը եւ Հայկ Մարտիրոսյանը: Ռոբերտ Հովհաննիսյանը Իսպանիայում ընթացող «Benasque Open 2023» շախմատի միջազգային մրցաշարի միանձնյա առաջատարն է: Հայ շախմատիստը 7 հնարավորից վաստակել է 6.5 միավոր:

Մրցաշարին մասնակցում է նաեւ Հայկ Մարտիրոսյանը, որը վաստակել է 6 միավոր եւ այժմ կիսում է 2-13-րդ հորիզոնականները:

ՀԱՅ ՄԱՐՔԻԿՆԵՐԸ՝ ԲԱՔՎՈՒՄ

Հայաստանի հրաձգության հավաքականը կմասնակցի Բաքվում կայանալիք աշխարհի առաջնությանը:

Այս մասին հայտնել է Հայաստանի հավաքականի գլխավոր մարզիչ Սեյրան Նիկողոսյանը:

«Մենք մի շարք նամակներ ենք գրել եւ ստացել ենք պատասխաններ, որ ամեն ինչով ապահովելու են, ու խնդիր չունենք: Գնալու ենք աշխարհի առաջնությանը, որտեղ խաղարկվելու է Օլիմպիական խաղերի վարկանիշ: Նման միջոցառումը բաց թողնել չի կարելի»,-ասաց Նիկողոսյանը:

Մասնագետի խոսքով՝ այժմ հավաքականն ունի մեկ քվոտա, բայց հույսեր կան եւս երկու ուղեգիր նվաճելու:

Անդրադառնալով Եվրոպական խաղերում մարզիկների թիմային պայքարում գրանցած արդյունքին՝ Նիկողոսյանը շեշտեց, որ կատարած աշխատանքի գնահատականն այն է, որ նրանք փոխչեմպիոններ եւ ռեկորդակիրներ են: Իսկ ինչ վերաբերում է անհատական պայքարին, ապա անհաջողությունը կապված է լավ արդյունք գրանցելու բուռն ցանկության հետ:

«Ինչ վերաբերում է միքս պայքարում լավ արդյունք գրանցելուն, ապա համադրվել են փորձառուն եւ քիչ փորձառություն ունեցողը: Նրանք լրացնում են միմյանց»,-ասաց նա:

Ընթացիկ ամսվա ավարտին հավաքականը ուսումնամարզական հավաք կանցկացնի Լեհաստանում, իսկ օգոստոսի 14-ից կմասնակցի Բաքվում կայանալիք աշխարհի առաջնությանը:

Հայաստանի հրաձգության հավաքականի անդամներ Էլմիրա Կարապետյանը եւ Բենիկ Խլղաթյանը դարձել էին Եվրոպական խաղերի փոխչեմպիոններ: Լեհաստանում կայացած Եվրոպական խաղերի հրաձգության 10մ օդամղիչ ատրճանակ միքս մրցաձեւում հավաքելով 581 միավոր՝ նրանք զբաղեցրել էին երկրորդ հորիզոնականը: Առաջին տեղում Իտալիայի թիմն էր: Անհատական մրցապայքարում Էլմիրա Կարապետյանը եւ Բենիկ Խլղաթյանը չէին հաղթահարել որակավորման փուլի արգելքը:

ՄԱՐՔԱԿԱՆ

ՌԻՍՈՒՄՆԱՄԱՐՔԱԿԱՆ ՀԱՎԱՔ

Կրտսեր տարիքի պատանիների Հայաստանի հավաքականը՝ Արթուր Մելքումյանի գլխավորությամբ, ուսումնամարզական հավաք է անցկացնում Ծաղկաձորում, որը կտեւի մինչեւ հուլիսի 22-ը: Մեր ընտրանին պատրաստվում է օգոստոսին Սլովենիայում կայանալիք Եվրոպայի առաջնությանը:

ՄԱՐՄՆԱՄԱՐԶԻԿՆԵՐԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ ԵՆ

Հայաստանի մարմնամարզության երիտասարդական թիմի անդամները կմասնակցեն Եվրոպական երիտասարդական օլիմպիական փառատոնին:

Սլովենիայի Մարիբոր քաղաքում սույն թվականի հուլիսի 23-ից 29-ը կանցկացվի Եվրոպական երիտասարդական օլիմպիական փառատոնը, որին թիմը կմասնակցի հետեւյալ կազմով՝ Համլետ Մանուկյան, Մամիկոն Խաչատրյան, Ռոբերտ Գյուլումյան, Մարիետա Բուչախչյան: Մարզիչները կլինեն Հայկ Նազարյանը եւ Քնարիկ Բրոսյանը:

Մեր տեղեկություններով՝ այժմ թիմը ամբողջ կազմով ուսումնամարզական հավաք է անցկացնում Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում:

ՆՈՐ ՄԵԴԱԼ՝ ԾԱՆՐԱՄԱՐՏՈՒՄ

Հայաստանի ներկայացուցիչ Աշոտ Մարգարյանը (102 կգ) բրոնզե մեդալակիր է դարձել Մոլդովայի մայրաքաղաք Քիշնեւում ծանրամարտի Եվրոպայի պատանեկան (Մ15, Մ17) առաջնությունում:

Մինչեւ 17 տարեկանների պայքարում հայ ծանրորդը գրանցել է երկամարտի 312 կգ (141+171) արդյունք: Մարգարյանը փոքր արծաթե մեդալ է նվաճել պոկում վարժությունում, իսկ հրումում արժանացել է բրոնզե մեդալի:

Երկամարտի 320 կգ (143+177) արդյունքով չեմպիոնի կոչումը նվաճել է վրացի Սաբա Ադամիան, իսկ արծաթե մեդալակիր է դարձել Լեհաստանի ներկայացուցիչ Մարցին Ջիոլկովսկին 314 կգ (142+172):

Սա Հայաստանի թիմի 10-րդ մեդալն է պատանեկան ԵԱ-ում: Ավելի վաղ Սերյոժա Բարսեղյանը (Մ17, 67 կգ), Ժորա Գրիգորյանը (Մ17, 61 կգ), Աննա Ամրոյանը (Մ17, 76 կգ), Էմմա Պողոսյանը (Մ17, 81 կգ) եւ Վալերիկ Մովսիսյանը (Մ15, 89 կգ) դարձել էին Եվրոպայի չեմպիոն, Հովհաննես Ղահրամանյանը՝ փոխչեմպիոն (Մ17, 81 կգ) իսկ Կառլեն Դավթյանը (Մ17, 49 կգ), Յուղաբեր Ամրոյանն (Մ17, 40 կգ) ու Ալինա Սուքիասյանը (Մ17, 71 կգ) նվաճել էին բրոնզե մեդալ:

● *Հուլիսի 13-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Շերշե լա ֆամ» ներայացումը: Տոմսերի արժեքը՝2000-5000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս վերադարձնել կամ վերաձեւակերպել սխալ կամ ավելի վճարված գումարները:

Լեւոն Դավթյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե ՀՀ պետական բյուջեի գանձապետական հաշիվներին սխալ վճարում եք կատարել կամ ավելին եք վճարել, գումարի վերադարձման կամ վերաձեւակերպման նպատակով կարող եք դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն: Դիմումին կից ֆիզիկական կամ իրավաբանական անձը ներկայացնում է վճարումը հաստատող փաստաթղթերի բնօրինակները, մասնավորապես՝ անդորրագիրն ու վճարման հանձնարարագիրը: Եթե վճարումը կատարված է պետական վճարումների էլեկտրոնային համակարգի միջոցով, ապա, որպես վճարումը հաստատող փաստաթուղթ, կարող է հանդիսանալ վճարումների պետական էլեկտրոնային համակարգի գեներացված անդորրագիրը կամ անդորրագրի 20-նիշանոց ծածկագիրը, ինչպես նաեւ վճարված գումարը վերադարձնելու հանգամանքների հիմնավորման մասին գանձող մարմնի տեղեկանքը: Եթե չգիտեք, թե որ մարմինն է գանձում կատարել, ապա անհրաժեշտ է մուտք գործել կայքի «Գանձապետական հաշիվներ» բաժինը, գտնել համապատասխան հաշվեհամարը, որին կից նշված է նաեւ հաշիվը տնօրինող մարմնի անվանումը:

Եթե դիմումը ներկայացվում է լիազորված անձի կողմից, ապա վերադարձը կամ վերաձեւակերպումը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել նաեւ նոտարի կողմից վավերացված լիազորագիրը:

Եթե վերադարձման ենթակա գումարները վճարված են անչափահաս երեխաների անունով, ապա դիմումը ներկայացվում է ծնողներից մեկի անունով, իսկ վերադարձը հիմնավորող փաստաթղթերի հետ տրամադրվում են նաեւ ծննդյան վկայականների պատճենները:

ՀՀ ֆինանսների նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Վերադարձման դեպքում դիմումում պետք է նշել նաեւ բանկային ռեկվիզիտները, այսինքն՝ այն բանկի եւ մասնաճյուղի անունը, որտեղից դիմողը պետք է ստանա վերադարձված գումարը եւ անձնագրի տվյալները /սերիան, ում կողմից է տրված, պատճենը/: Բանկային հաշվեհամարի առկայության դեպքում անձնագրի տվյալների ներկայացումը պարտադիր չէ:

Վերաձեւակերպման դեպքում դիմումի մեջ պետք է նշել ճիշտ գանձապետական հաշվի համարը:

Վերոնշյալ փաստաթղթերի առկայության դեպքում դիմողը 5-օրյա ժամկետում տեղեկացվում է գործարքը /գումարի վերադարձ կամ վերաձեւակերպում/ կատարված լինելու մասին:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Եթե դպրոցում առաջացել է որեւէ առարկայի թափուր 4 դասաժամ, նույն առարկան դասավանդող մյուս ուսուցիչն ունի 18 դասաժամ, կարելի՞ է այդ 4 դասաժամի համար հայտարարել ուսուցչի թափուր տեղի համար մրցույթ:

Երվանդ Լալայան (46 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ոչ, քանի որ թափուր տեղ առաջանալու դեպքում դասաժամերը տրամադրվում են հաստատությունում աշխատող, համապատասխան որակավորում ունեցող, նույն հաստատությունում տվյալ առարկան դասավանդած կամ դասավանդող՝ մինչեւ 22 դասաժամ ծանրաբեռնվածություն ունեցող ուսուցչին:

Այո, քանի որ հաստատությունում մրցույթ հայտարարվում է տվյալ առարկան դասավանդող ուսուցչին առնվազն 22 դասաժամ ծանրաբեռնվածությամբ ապահովելուց կամ այդ ծանրաբեռնվածությունից նրա գրավոր հրաժարվելուց հետո:

ՀՀ կրթության տեսչական մարմին

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մանրամասների համար տեղադրում ենք հետեւյալ օրենսդրական հղումը՝ ՀՀ ԿԳ նախարարի՝ 15.04.2013թ. «Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգը հաստատելու եւ Հայաստանի Հանրապետության կրթության եւ գիտության նախարարի 2010 թ. օգոստոսի 2-ի № 1262-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» № 396-Ն հրամանով (փոփ.՝ 18.02.2021թ. հ. 22-Ն հրաման) հաստատված հավելվածի 3-րդ եւ 4-րդ կետեր:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Փաստաբանների պալատի վարչական շենքից դեպի Ներքին գործերի նախարարություն շարժված փաստաբանների խումբը եկել էր ՆԳ փոխնախարար Արամ Հովհաննիսյանին շնորհելու հավաստագիր՝ որպես «Փաստաբանների թշնամի»:

Ներքին գործերի նախարարության առաջ տեղի ունեցող բողոքի ակցիային հաջորդեց քայլերթ ԲԴԽ-ի դիմաց՝ Կարեն Անդրեասյանի հրաժարականի պահանջով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 7 + 12 +18 + 21
Կոտայքի լեռներ	+ 9 +11 +18 + 20
Կոտայքի նախալեռներ	+14 + 16 +22 + 24
Գեղարքունիք	+10+ 13 +17 + 20
Լոռի	+10 + 14 +19 + 23
Տավուշ	+15+ 19 +24 + 28
Արագածոտնի լեռներ	+ 7 + 10 +16 + 19
Արագածոտնի նախալեռներ	+13 + 17 + 22 + 26

Արարատ	+16 + 19 +26 + 28
Արմավիր	+15+ 17 +25 +27
Վայոց ձորի լեռներ	+10 + 12 +18 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+16 + 19 +26 + 29
Սյունիքի հովիտներ	+17 + 22 +32 + 35
Սյունիքի նախալեռներ	+13+ 16 +22 + 24
ԼՂՀ	+17 + 22 +32 + 37
Երեւան	+ 16 + 18 +26 + 28

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.7.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հովսեփյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*